# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | Digital physiograph | Meditech | Digital physiograph | Meditech Technologies India Private Limited | Բարձր լուծաչափով գունավոր TTFT էկրանով թվային ֆիզիոգրաֆը օգտագործվում է մարդու և կենդանիների ԷԷԳ, ԷՍԳ, ԷՆԳ, ԷՄԳ, անոթազարկ, շնժառություն, արյան ճնշում և այլ ցուցանիշների չափման համար։ Այն պատրաստվածէ թեթև մետաղից՝ կոմպակտության և թեթևության ապահովման նպատակով: Դրա աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է տարբեր ինտեգրալ սխեմաների կիրառմամբ։ Գունավոր TFT էկրանը կարող է ցույց տալ չափանիշները ինչպես օնլայն , |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | այնպես էլ օֆլայն: Համակարգը ունի ութ ալիք՝ (ուժ, ճնշում, ձայն, շնչառություն, ջերմաստիճան, անոթազարկ, շնչառական գոտի և իզոտոնիկ). Սարքը ունի հնարավորություն պահպանելու ձայնագրման տվյալները և վերանայելու այն, նաև կարող է միանալ համակարգչին USB –ով: Համակարգը ապահովված է և մատակարարվում է համակարգչային ծրագրային փաթեթով, ինչը թույլ է տալիս համակարգչով վերլուծություններ կատարել և տպել ստացված արդյունքները: Սարքի հետ մատակարարվում է համապատասխան կցորդիչներ՝ թվարկած չափումները իրականավնելու համար. -Կենսապոտենցիալի կցորդիչ (Biopotential Coupler) Նախատեսված է բոլոր AC երևույթների գրանցման համար՝ ECG, EEG, EMG, ENG և այլն: Մատակարարվում է 3-փին միացման տուփով, EEG/EMG էլեկտրոդներով և մածուկով: -EKG կցորդիչ Նախատեսված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կլինիկական ECG գրանցման համար։ Մատակարարվում է 5-փին միացման տուփով, վերջույթների և կրծքային էլեկտրոդներով, գելով։ -Ձգման տվիչի կցորդիչ (Strain Gauge Coupler) Օգտագործվում է բոլոր strain gauge տրանսդյուսերների հետ։ Կիրառվում է մկանային ակտիվության ուժի, դեղերի ազդեցության սրտի գործունեության վրա, կանուլացված կենդանիներից արյան ճնշման, ծավալային փոփոխությունների գրանցման համար։ -Զարկերակ–շնչառություն կցորդիչ Նախատեսված է զարկերակի կամ շնչառական ակտիվության գրանցման համար՝ զարկերակային տվիչի, շնչառական գոտու կամ շնչառական տրանսդյուսերի միջոցով։ -Ջերմաստիճանի կցորդիչ Օգտագործվում է ներքին կամ մակերեսային ջերմաստիճանի գրանցման համար՝ համապատասխան տրանսդյուսերների միջոցով։ -Իզոտոնիկ կցորդիչ Օգտագործելով այն իզոտոնիկ նուրբ շարժման տրանսդյուսերի հետ՝ հնարավոր է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | իրականացնել հետազոտություններ մեկուսացված արգանդի և մեկուսացված աղիքի վրա: -Տրանսդյուսեր Տրանսդյուսերը սարք է, որը փոխակերպում է ֆիզիկական էներգիայի մի ձևը էլեկտրական էներգիայի կամ հակառակը: Այն պարամետրերը գրանցելու համար, որոնք էլեկտրական ձևով չեն առկա (օր.՝ զարկերակ, շնչառություն, ջերմաստիճան, ֆոնոկարդիոգրամմա և այլն), անհրաժեշտ է օգտագործել համապատասխան տրանսդյուսեր: Տեխնիկական բնութագրեր .Ալիքների քանակը՝ 1, 2 և 3 .Էկրան և չափս՝ գունավոր TFT, 15.5 × 9.5 սմ . Ալիքի լայնություն՝ 80 մմ . A/D փոխակերպում՝ 16-բիթ . Զգայունություն՝ 50-500 µV/սմ և 1-100 mV/սմ . Սքանավորման արագություն՝ 0.1-100 բաժանում/վրկ -Տվյալների նմուշառման հաճախականություն՝ > 256 Հց -Մուտքային դիմադրություն՝ > 1 ՄOhմ CMRR՝ > 80–85 դԲ Ստանդարտ պարագաներ . ECG էլեկտրոդներ՝ 1 հավաքածու (4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հատ) . EEG էլեկտրոդներ՝ 10 հատ . Կենսապոտենցիալի միացման տուփ՝ 1 հատ . EMG սկավառակաձև էլեկտրոդներ՝ 1 հավաքածու (10 հատ) . Գրաունդ էլեկտրոդ՝ 1 հատ . EEG մածուկ՝ 1 տարա . ECG գել՝ 1 շիշ . Օգտագործման ձեռնարկ՝ 1 հատ Սարքավորման տեղադրում և անձնակազմ ուսուցում վերապատրաստված մասնագետի կողմից: Առաջարկվող սարքը նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և ունի արտադրողի 1 տարվա պաշտոնական երաշխիք: Սարքը պետք է արտադրված լինի մատակարարումից ոչ շուտ, քան 2 տարի առաջ: Մատակարարը պետք է ապահովի սարքավորման տեղադրումը |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | | |